

Անիի հարաւը, Սուկաւէտ լեռներու ոտքը, կը տարածուի Ալաշկերտի (հին Բագրեւանդ դաշտը) :

դ) Հարաւային շրջան. — Հայաստանի հարաւային շրջաններու դաշտերը մեղմ կլիմայ ունին, ձմեռն ալ բաւական տաք կ'ընէ: Երջակայ լեռներուն պատճառով առատ ջուր ունին եւ հարուստ բուսականութիւն, կարծես թէ փոքրիկ պարտէզներ ըլլան: Այսպէս Մանազկերտի դաշտը (Վանի լիճին հիւսիսը), Մշոյ դաշտը եւ Խարբերդի քով Ծոփքի դաշտը: Վան քաղաքը ունի իր Ալգետամները. իսկ Կորդուաց աշխարհի մէջ գրեթէ դաշտեր չկան:

5. — ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆՏՆԵՐԸ

Հայաստան գրեթէ բոլորովին լեռնային երկիր ըլլալով, ընական է թէ պիտի ունենար նաեւ բազմաթիւ գետեր, որոնք մեծ հարստութիւն են երկրագործութեան համար, եւ ներկայիս ելեկտրական ուժ հանելու շատ յարմարութիւն ունին:

Հայաստանի գետերուն մեծ մասը Կարինի բարձրաւանդակէն կը բխի (2800 մ. ծովէն), որ կարծես անհամուծ ջրամբար է իր մեծ ու փոքր գետակներով, անոր համար Բիւրակնեան լեռներ ալ կը կոչուին, ինչպէս ըսինք:

Հայաստանի գետերը երեք ուղղութեամբ գէպի ծովերը կը թափին.

ա) Եփրատը (2800 հազարամեղր երկայն) բխելով Կարինի բարձրաւանդակէն, արեւմուտքէն Հայաստանը կը շրջապատէ, կ'անցնի Խարբերդի եւ Մալաթիոյ մէջէն ու կը մտնէ Սիւրբիա, ապա Միջագետք եւ կը թափի Պարսից ծոցը: Ասոր կը միանայ Տիգրիսը (2000 հզրմ.), սկսելով Սասունի լեռներէն՝ կը կտրէ կ'անցնի Կորդուաց (Քիւրտիստանի) լեռները եւ Եփրատի հետ միացած կ'ընէ Պարսից ծոցը:

բ) Ճորոխ (400 հզրմ.) գետն ալ Կարինի լեռներէն կը բխի, նախ արեւմուտք կ'երթայ, ապա դառնալով գէպի հիւսիս՝ կ'անցնի Պոնտական լեռները եւ Սեւ ծով կը թափի Տրապիզոնի եւ Պաթուսի մէջտեղ: Ճորոխին կը միանան Արտաշանի եւ Թորքուսի գետերը:



Հրազդան գետը՝ Երեւանի մօտ

դ) Մեր երկրին ամէնէն շատ սիրուած եւ երգուած գետը՝ Արաքս կամ Երասխն է (950 հզրմ.), որ կը բխի Բիւրակնեան լեռներու արեւելքէն եւ կտրելով Արարատեան դաշտը՝ կ'ընէ գէպի պարտկազան սահմանը, ապա Միւնիքի մէջէն կ'երթայ գէպի հիւսիս-արեւելք ու կը թափի Կուր գետին մէջ: Արաքսը Կուր գետին (1200 հզրմ.) օժանդակն է, որ կը սկսի Տայքի լեռներէն (Պաթուսի կոնակը) եւ արեղի ձեւով սահման կը դնէ Հայաստանի ու Վրաստանի մէջ եւ երթալով արեւելք՝ իր մէջ կ'ընդունի Արաքսը ու կը մտնէ Կասպից ծով:

Բայց ծովեր դացող այս գետերէն, Հայաստան ունի դեռ բարձրաթիւ մեծ ու փոքր գետեր, որոնք օժանդակ գետեր կը կոչուին, այսինքն օլնական գետեր եւ կը թափին ծովեր դացող գետերուն մէջ, այսպէս Արածանի (650 հզրմ.) կամ Հայկական Եփրատը, որ Ծաղկանց լեռներէն բխելով խառնուի Եփրատին՝ Խարբերդի քով: